ինձ իր վառօդով եւ հրացանով, թէ նրա համար, որ իմ ընկեր Կարօն նոյնպէս սիրում էր զէնքեր: — Ոչ այս եւ ոչ միւսը, այլ ես կարծում եմ, որ ամէն երեխայի բնութեան մէջ կայ այդ սէրը, նախքան մարդ լինելը նա ձգտում է զինոր լինել. եւ եթէ վերջը հանգչում է նրա մէջ այդ զգացմունքը, դրա պատճառն է կեանքը եւ տարապայման կրթութիւնը...

Երբ վարժապետս առաջին անգամ տոեց իմ ձեռքը փետուրէ գրիչը իմ մէջ ծագեց մի ծիծաղելի միտք . — «Ի՞նչ լաւ կը լինէր, որ այդ գրիչը փոքր-ինչ հաստ ու պինդ լինէր, ես նրանից հրացան կը շինէի, կոթ էլ չէր ուզենայ»... Իմ մտածութիւնը թէեւ երեխայական էր, բայց համեմատութեանը սխալ չէր, որովհետեւ փետուրէ գրիչն էլ հրացանի խողովակի ձեւ ունի: Իսկ փայտից խենջար, թուր, սուր, աղեղն, նետ, նիզակ եւ այլ զէնքեր շինելու մէջ ես կատարեալ վարպետ էի. այդ էր պատճառը, որ որսորդն աշխատում էր համոզել մօրս, որ նա յանձնէր ինձ քեռիներիս արհեստանոցը, զէնք շինել սովորէի: Բայց մայրս չէր համաձայնւում. նա մինչեւ անգամ մեղք էր համարում սովորելը այն արհեստի, որ պատրաստում է մարդիկ կոտորելու գործիքներ: Տէր Թոդիկն էլ միեւնոյնն էր կրկնում:

Բայց Կարօն ինձանից աւելի ազատ եւ աւելի բախտաւոր էր, նա ոչ մայր ունէր, ոչ հայր եւ ոչ էլ վարժապետ. ոչ ոք նրան չէր արգելում հետեւել բնութեան ձայնին. տատը չէր ճնշում նրան, եւ որսորդի ազդեցութեան ներքոյ նա դարձաւ բոլորովին ուրիշ տղայ, քան թէ էին նրա բոլոր ընկերները: Այն օրից, որ թողեց դպրոցը, ես ինքս մեծ փոփոխութիւն էի տեսնում նրա մէջ: Ես լսում էի նրանից ինձ համար շատ անհասկանալի խօսքեր. մի անգամ ասաց նա.

— Ֆարհատ, մեր գիւղացիները շատ աղքատ են, կան ընտանիքներ, որ հաց չունեն ուտելու:

— Դու ի՞նչ գիտես, — հարցրի ես:

— Որսորդի հետ երէկ ման եկանք մի քանի գիւղեր. նա ինձ ներս տարաւ գիւղացիների խրճիթները. ես տեսայ սարսափելի չքաւորութիւն:

— Ի՞նչ է պատճառը:

— Այդ մահմեդականները մեր գիւղացիների արիւնը ծծում են: Այդ խաները, բէգերը նրանց կեանքը բոլորովին մաշում են: Որսորդը ինձ բացատրում էր, թէ ինչ պէտք է արած, որ գիւղացիները աւելի հանգիստ եւ աւելի կուշտ լինեն:

Ես ոչինչ չպատասխանեցի. նա շարունակեց.